

անարգանաց արժանի է եւ անգոսնելոյ, այլ ըստ հրամանի ձեր աղտեղասեր աւրինացո՞ղ՝ գովութեան արժանի է եւ մեծարանաց»:

15 Եւ լուեալ զայս պատասխանի Սուրենայ ի մեծ հայրապետէն Զայոց Սահակայ յիւրմէ տոհմակցէն, եւ պատմեալ թագաւորին Արեաց՝ ի ցասումն զայրացման գրգռեալ թագաւորն՝ հրաման տայ այնուիւհետեւ յանդիման բազմամբոխ¹ ատենին հարցանել զնախարարսն Զայոց եւ զԱրտաշէս: 16 Եւ կուտեալ իշխանացն Զայոց բազում աղտեղաբանութիւնս եւ ազգի ազգի խաւսս անարժանութեան ի վերայ թագաւորին իւրեանց. քանզի ոչ եթէ ի նմա եղեալ զիրսն² խաւսէին, այլ եւս յաւելուածովք ըստ աւրինի թշնամութեան կուտէին ի վերայ նորա բազում վնաս. որ թեպէտ եւ յուրաստ եղեալ Արտաշէսի³, թէ չէ այդպէս՝ ոչ հաւատացին լսողքն, եղեալ զկամս իւրեանց՝ բառնալ ի միջոյ զթագաւորութիւնն յԱրշակունեաց ազգէն: 17 Մանաւանդ զի լուաւ թագաւորն Արեաց ամենայն աւագանեաւք դրանն ի դատախազացն Արտաշէսի, թէ բնաւ զի՞ իսկ եւս պիտոյ է թագաւոր. այլ իշխան պարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեզ, որ եւ զհրաքանչիւր ուրուք ի մէջ ծանուցեալ զհպատակութիւն եւ զանհպատակութիւն՝ ցուցցէ⁴ ձեզ:

18 Եւ լուեալ զայս Վռամայ հանդերձ աւագանւով դրանն՝ ոյժ ուրախանայր. եւ այնուիւհետեւ հրաման տայր վաղվաղակի ի բաց առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշէսէ. ընդ նմին եւ գտունն կաթողիկոսական ի սրբոյն Սահակայ՝ յարթունիս ունել, փոխանակ զի ոչ միաբանեցաւ տալ վկայութիւն ընդ նախարարսն Զայոց: 19 Եւ այսպէս վճարեալ՝ հրաման Պարսից թագաւորին ի գլուխ ելաներ: 20 Յայնմիւհետեւ բարձաւ թագաւորութիւն յազգէն Արշակունեաց ի վեցերորդ⁵ ամի Արտաշէսի, ըստ բանի երանելոյ առն Աստուծոյ մեծի քահանայապետին Ներսէսի, եւ անկաւ աշխարհս Զայոց ընդ լծով ծառայութեան⁶ անաւրէն իշխանութեան Պարսից: 21 Եւ առեալ զինս իշխանացն Զայոց ի թագաւորէն Պարսից, ընդ մատնութեանն Արտաշէսի, պատիւս⁷ եւ մեծութիւնս, նման արծաթոյն զոր առին ընդ Յովսէփայ եղբարքն, ընդ մատնութեանն իսմայէլացի վաճառականացն, եւ այսպէս հրաժարեալք ի դրանէ՝ եկին յաշխարհն իւրեանց:

1 ՁՏՏ. այնուիւհետեւ ի բազմամբոխ. *այսպէս ըստ Ճառ.*

2 Ձ. ի նմա գեղեալ իրսն

3 ՁԱտ. *անխտիր* արտաշէսի եւ արտաշէսի

4 Ձ. ցուցէ

5 Ձ. *նախ*՝ ի կ(?) յերրորդ. *յետոյ՝ թիւը* (կ?) *քերած եւ ուղղած*՝ ի. գ. երրորդ

6 Ճառ. չար ծառայութեան

7 ՏՏ. պատիւ